13.10.25 - 16.10.25
11:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում

Ս.թ. հոկտեմբերի 13-ին՝ ժամը 11:00-ին, ԵՊՀ ԵԼՀ ֆակուլտետում կմեկնարկի «Աշխարհում իտալերենի XXV շաբաթ»-ի շրջանակում կազմակերպվող «Իտալախոս աշխարհ. լեզու առանց սահմանների» խորագրով միջոցառումների շարքը:

Իտալական բաժնի համար նախատեսված միջոցառումների ժամանակացույցը.

- միջոցառման բացման հանդիսավոր արարողություն **- 13.10.2025-ին՝ ժամը 11:00-ին,**
- **դասախոսների** վերապատրաստում **- 13.10.2025-ին՝ ժամը 14:00-ին,**
- **դասախոսների** վերապատրաստում **- 14.10.2025-ին՝ ժամը 09:30-ին,**
- **ուսանողների համար դասախոսություն - 15.10.2025-ին՝ ժամը 11:00-ին,**
- **դասախոսների** վերապատրաստում **- 16.10.2025-ին՝ ժամը 14:30-ին:**

Իտալական բաժնի դասախոսների վերապատրաստման դասընթացը հոկտեմբերի 13-ին, 14-ին, 16-ին կվարեն Վենետիկի Կա Ֆոսկարիի (Իտալիա) համալսարանի դասախոսներ դոկտոր Գրացիանո Սերաջոտտո և դոկտոր Կամիլիա Սպալիվիերոն, իսկ հոկտեմբերի 15-ին իտալական բաժնի ուսանողների համար դասախոսություն կկարդա Պերուջայի՝ օտարերկրացիների համար համալսարանի (Իտալիա) դասախոս, դոկտոր Բորբալա Սամուն:

Միջոցառման բացման հանդիսավոր արարողությանը կմասնակցի ՀՀ-ում Իտալիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ալեսսանդրո Ֆերրանտին:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000

info@ysu.am